

«Արմինֆո»-Պարոն վարչապետ, ինչպես կբացատրեք արտաքին ներդրումների կտրուկ նվազումը դեպի Հայաստան, որքան էլ լավատես եք: Քսան տարի առաջ դուք ստեղծեցիք տնտեսական ուսումնասիրությունների ինստիտուտ, որի կարիքը Հայաստանում կար, որովհետև ալտերնատիվ տնտեսական զարգացման գնահատականների կարիք կար: Այսօր նման ինստիտուտ գոյություն չունի, որովհետև բոլոր գնահատականները տալիս է կառավարությունը, բոլոր ինֆորմացիան հավաքվում է ձեզ մոտ: Դա ձեր խմբի, նախարարների գնահատականներն են, այլտերնատիվ տնտեսական միտք Հայաստանում չկա:

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյան**-Շնորհակալություն, որ հիշում եք այդ ինստիտուտի մասին: Ալտերնատիվ հետազոտությունների ուսումնասիրման ինստիտուտն է, որ մինչ այսօր գոյություն ունի, փակ սեմինարների շրթան շարունակվում է: Փակ, որովհետև քաղաքական պաշտոնն ու անկախ հետազոտությունն անհամադրելի են: Ինստիտուտն աշխատում է, հետազոտությունները կատարվում են, և փակ սեմինարների ցիկլը շարունակվում է: Համաձայն չեմ, որ այլընտրանքային հետազոտություններ չկան: Կան և Հայաստանում, և ԱՄՆ-ում կան երիտասարդ մասնագետներ, որոնց ուշադրությանկենտրոնում Հայաստանի տնտեսությունն է: Մենք փորձում ենք հանդիպել, այլընտրանքային տեսակետներ լսել, խրախուսել: Որքան էլ որ քննադատությունն ավելի սուր է, այնուամենայնիվ, դա խրախուսելի է, որ հայ երիտասարդները զբաղվեն, մասնագիտական հետազոտություն իրականացնեն ոլորտում: Այլընտրանքային հետազոտությունները խիստ անհրաժեշտ են: Վատատեսությունը, որ կա, պայմանավորված է հանգամանքով, որ այլընտրանք ժողովուրդը չի տեսնում: Ես պատրաստ եմ, որ նման հետազոտական կենտրոններն իրենց արդյունքները քննարկեն մեզ հետ: Մենք բաց ենք, ՁԼՄ-ներին հրավիրենք այդ քննարկումներին և լսենք, թե ինչ այլընտրանք է առաջարկվում թե տնտեսական, թե քաղաքական ոլորտներում: ՁԼՄ-ների 90 տոկոսը կենտրոնացած է քննադատության վրա, միայն 10 տոկոսն է, որ այլ մոդել է ընտրում և քննարկում ծավալում, և եթե հարաբերակցությունը փոխվի, բոլորս կշահենք դրանից: Կառավարությունը կշահի, որովհետև դա մեզ կուժեղացնի: Ինչքան էլ լավատես լինենք՝ մեր կյանքում առկա են թերություններ: Ահերքելի է այս պնդումը: Դա չի նշանակում, որ չպետք է լինենք լավատես: Դա վտանգավոր է, երբ մարդ կորցնում է լավատեսությունը, դա կործանարար է: Օտարերկրյա ներդրումների ծավալը կայուն անկման միտում ունի վերջին 5 տարվա ընթացքում և սա լրջագույն խնդիր է, որի հետ մենք առնչվում ենք:

Համար մեկ խնդիրը, որ պետք է լուծենք՝ շինարարության ոլորտն է, ճնշող մեծամասնությունը գնում էր շինարարության ոլորտին: Եթե տեղեկատվական ոլորտը հանենք՝ «Արմենթել», «Վիվասել», «Օրանժ», որոնք մեծածավալ ներդրում կատարեցին, հիմնական խնդիրը շինարարական ոլորտի ներդրումներն են և մասնավոր հատվածի կողմից իրականացվող շինարարական ներդրումները, որոնք այսօր էսպես նվազել են: Եվ դա է պաճառը, որ շինարարության ոլորտը Համախառն ներքին արդյունքում 2 անգամ նվազել է հետձգնաժամային ընթացքում: Շինարարությունն էր մինչև ճգնաժամը տնտեսական աճի հիմնական շարժիչը: Ունենք հիմնարար պրոբլեմ, ինչպես պետք է լուծենք: Տնտեսության դիվերսիֆիկացիայով արդյունաբերության ճյուղերը զարգանում են, և դա օբյեկտիվ է: Շինարարության փուչիկը, որ փչվեց և պայթեց, առաջացրեց բացասական երևույթ: Գների աճ էր կատարվում 15-20 տոկոսով և տարբեր ճյուղեր դառնում էին ոչ մրցունակ շինարարության հետ: Ֆինանսական միջոցները արդյունաբերությունից դուրս էին մղվում շինարարության ոլորտ, որովհետև արդյունաբերության մակարդակը միայն գների աճի պատճառով բարձր էր: Ձեռնտու էր փակել գործարանը, գնել բնակարան և մեկ տարի հետո վաճառել: Այսինքն սպեկուլյացիայի էֆեկտը շինությունում շատ մեծ էր: Երբ փուչիկը պայթեց, ֆինանսական միջոցները հայտնվեցին սեփականատերերի մոտ և նրանք որոշեցին, թե որտեղ և ինչպես ներդրում անեն: Շինարարության անկման պատճառով տնտեսության աշխուժացման կարևորագույն պրոբլեմն է, որը շարունակվեց այս տարի: Ժամանակն է՝ քաղաքացիների փոքրածավալ խնայողությունները ուղղվեն շինարարության ոլորտ, հատկապես բնակարանային, որ էկոնոմ դասի բնակարան ձեռք բերեն և պետությունը լրացուցիչ ֆինանս հատկացնի, որ հիպոթեքային հիմնադրամները երկարաժամկետ էժան վարկեր տրամադրեն, պահանջարկն աճի և դա կբերի ներդրումների բնակարանային շուկայում: Տարեկան մասնավոր ներդրումները կազմում էին 700 մլն-ից 1 միլիարդ դոլար, սա լրջագույն շարժիչ էր տնտեսական ակտիվության համար:

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյան** – «Ռոսնեվթի» հետ կապված այն պաշտոնական հայտարարությունը, որ արեց «Ռոսնեվթի» նախագահը՝ պարոն Մեչինը, հանրապետության նախագահի հետ հանդիպման ժամանակ, որին մասնակցում էր նաև Ռուսաստանի Դաշնության նախագահը, հետևյալն էր, որ նրանք իտալական ընկերության հետ եկել են համաձայնության, հաստատել են ներդրումային ծրագիրը Հայաստանում նոր ձեռնարկություն կառուցելու վերաբերյալ: Այդ ձեռնարկությունը ենթադրում է 400 մլն դոլարի ներդրումներ, որ «Ռոս նեվթը» պետք է իրականացնի Հայաստանի Հանրապետությունում: Դա վերաբերում է նոր գործարանին, որը արտադրելու է նաև անվադողեր, որի համար հումքը լինելու է

կառուչուկը, որը պետք է արտադրվի Հայաստանում: Այսինքն այս թիվն արդեն պաշտոնապես հնչեցվել է: Բանակցությունները դեռևս շարունակվում են, որովհետև առաջին փուլում մենք արդեն հստակ պատկերացում ունենք այդ նոր ձեռնարկության կառուցման մասին, երկրորդ փուլը պետք է վերաբերի հարաբերություններին Նաիրիտի՝ այս նոր ներդրման ծավալների հետ կապված:

**«Գալա» հեռուստաընկերություն – Պարոն Սարգսյան, Ձեր երկարաշունչ պատասխանների ընդհանուր տրամաբանությունն այսպես կարելի է հասկանալ, որ կան բարեփոխումներ, կա լուրջ առաջընթաց, սակայն մարդիկ քիչ լավատես են, կամ ցանկություն չունեն տեսնել այն ամենը, ինչ կատարվում է, լրատվամիջոցները հիմնականում քննադատում են, որը չպետք է այդպես լինի ձեր կարծիքով, այնուամենայնիվ, ես կուզեի տալ հետևյալ հարցը...**

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյան–** Բայց ինչու եք ինձ վերագրում բաներ, որ ես չեմ ասել: Ես չեմ ասել, որ այդպես չպիտի լինի, հակառակը՝ ես գտնում եմ, որ դրա համար կան օբյեկտիվ հիմքեր:

**Գալա – Այո, դուք կոչ եք անում լինել ավելի լավատես:**

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյան–** Ոչ, ոչ, ես այդպիսի գնահատական չեմ տվել, որ այդպես չպետք է լինի: Ես ասել եմ ցանկալի է, որ մենք միասին միջավայրը փոխենք, իսկ դուք դե՞մ եք, որպեսզի լավատեսությունը մեր երկրում ավելի շատ լինի:

**Գալա – Ոչ, իհարկե:**

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյան –** Մի վերագրեք ինձ բաներ, որ ես չեմ ասել, դուք բոլորդ վկա եք՝ ինչ գնահատական եմ ես տալիս, իսկ դուք իմ ասածը մեկնաբանում եք:

**Գալա –** Թույլ տվեք ավարտեմ, պարոն վարչապետ, Ձեր և Մերժ Սարգսյանի պաշտոնավարումից սկսած՝ 2008թ.-ից առ այսօր տարեկան, պաշտոնական տեղեկությունների համաձայն, երկիրը լքել է 50-60 հազար մարդ: Արդյոք այս աղետալի ցուցանիշի մեջ տեսնում եք ձեր պատասխանատվության, մեղքի բաժինը և չեք կարծում, որ այն տեմպերով, ինչ տեմպերով որ արվում են բարեփոխումները, եթե նույն կերպ շարունակվեն նույն տրամաբանությամբ, ապա մի քանի տարի հետո Հայաստանը ընդհանրապես կդատարկվի և չեք կարծում, որ ձեր քաղաքական թիմը՝ Մերժ Սարգսյանի գլխավորությամբ, ժամանակն է, որ ուղղակի խոստովանի, որ ձախողել է:

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյան** – Շնորհակալություն հարցի համար, գնահատականների հետ համաձայն չեմ, բայց սիրով կպատասխանեմ ձեր հարցերին: Կարծում եմ, որ դուք քաջատեղյակ եք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի կարևորագույն թիրախը մենք նշել ենք արտագաղթի խնդիրը որպես լրջագույն խնդիր՝ գործազրկություն, աղքատություն, արտագաղթ, սրանք լրջագույն մարտահրավերներ են, որոնք կանգնած են մեր կառավարության առջև: Այս խնդիրը լուծելու համար պետք է ռեֆորմներ իրականացնել: Ռեֆորմներ իրականացնելը հեշտ չէ, որովհետև ռեֆորմ նշանակում է վարքագծային կանոնների փոփոխություն, մտածողության փոփոխություն, իսկ մենք միշտ երբ նախաձեռնում ենք ռեֆորմներ, ես այսօր ձեզ բերեցի մի քանի օրինակ, որ այդ ռեֆորմները միշտ էլ առաջին փուլում հանդիպում են որոշակի ընդդիմության: Փոփոխություններ կատարելը հեշտ չէ և մենք պետք է կարողանանք մեր երկրում ավելացնել ռեֆորմների պոտենցիան, որպեսզի ունենանք հաջողություններ: Իմ ցանկությունն է, որ զանգվածային լրատվական միջոցները այն գաղափարները, ռեֆորմների իմաստը, այն փիլիսոփայությունը, որ մենք փորձում ենք ներկայացնել ձեզ, որպեսզի դուք մեր այդ գաղափարները, թե ինչպես ենք մենք մտածում ռեֆորմները իրականացնելիս, դա ներկայացնեք հանրությանը, իհարկե, քննադատելով այն դրույթները, որոնց հետ դուք համաձայն չեք: Կարծում եմ սա է ճիշտ ճանապարհը առաջընթաց ապահովելու համար: Շատ վտանգավոր է, երբ մեր գաղափարները հանրությանը չեն ներկայացվում, այլ մեզ ներկայացվում են մեր գաղափարների սուբյեկտիվ ընկալումները և այդ ընկալումների քննադատությունն է ներկայացվում հանրությանը և հանրությունը քննադատության միջոցով պետք է հասկանա, թե մենք ինչ պայմանագիր ենք ստորագրել Ռուսաստանի հետ, թե մենք պարտադիր կուտակային բարեփոխումների հիմքում ինչն ենք դնում: Սա է իմ մտահոգությունը: Ինչպես պետք է մենք արտագաղթի դեմն առնենք: Առաջին հերթին կենսամակարդակը Հայաստանում պետք է բարձրացնենք, որպեսզի մարդիկ կարողանան իրենց տաղանդը, իրենց շնորհը իրացնեն Հայաստանում: Եվ եթե նրանք տեսնում են, որ իրենց Աստծու կողմից տրված տաղանդը կարող է իրացնել այլ երկրում ավելի մեծ հաջողությունների հասնելուն, բնականաբար, դա ստեղծում է նրանց մոտ մոտիվացիա երկրից գաղթելու համար: Դրա համար մենք միասին Հայաստանում պետք է ստեղծենք այնպիսի միջավայր, որ մարդիկ իրենց ապագան կապեն Հայաստանի հետ: Առաջին հերթին մենք, իհարկե, մեզ զգում ենք պատասխանատու այդ գործում և մենք պատրաստ ենք լսելու քննադատությունը, թե ինչն ենք մենք սխալ անում, ինչն ենք մենք վատ անում, ինչը պետք է շտկել, որտեղ ինչ պետք է անել: Այդպիսի երկխոսությունից կշահի մեր հասարակությունը, մեր երկիրը, մարդիկ

կտեսնեն այլընտրանք, մարդիկ իրենց հույսերը կկապեն այս երկրի հետ, մարդիկ իրենց ջանքերը կներդնեն՝ բարելավելու մեր երկրում կյանքը:

**«Երկիր.am» - Հարցս կենսաթոշակային համակարգի ներդրման մասին է, վերջին շրջանում շատ են գնահատականներ հնչում, որ պարտադիր կուտակային բաղադրիչը հակասահմանադրական է: Նման հայտարարություն արեց նաև Փաստաբանների պալատի նախագահը: Ինչ կարող եք ասել այդ մասով, կարո՞ղ եք հայտարարել , որ Սահմանադրությանը չի հակասում: Երկրորդ հարցս կենսաթոշակային միջոցների երկու կառավարիչների մասին է: Կարծես թե դուք հավելյալ տեղեկություն չեք կարող հաղորդել մեզ նրանց մասին, բայց ամեն դեպքում մի հարց եմ ուզում տալ. հնարավոր է, որ նրանցից որևէ մեկը ինչ-ինչ ձևերով կապված է հայաստանյան որևէ բարձրաստիճան պաշտոնյայի հետ: Կարծում եմ հարցի ենթատեքստը հասկացաք: Եվ երրորդ հարցը. կարծում եմ ձմեռ պապից ինչ որ ուզելու բան ունեք, կկիսե՞ք ցանկությունները:**

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյան**– Ծնորհակալություն հարցերի համար: Արդեն մի քանի ժամ է շփվում ենք և կարծում եմ դուք չեք կասկածում, որ ես բավարար տեղեկատվություն ունեմ, որ կարողանում եմ բավարարել ձեր պահանջները՝ այդ տեղեկատվության առումով, այդ թվում նաև կենսաթոշակային հիմնադրամների կառավարիչների վերաբերյալ: Բայց կոռեկտությունը պետք է պահպանել և ճիշտ չէ, որ վարչապետը դուրս գա գործադիր իշխանության լիազորությունների շրջանակներից, և որոշ հարցերի պատասխան ճիշտ կլինի, որ մենք թողենք համապատասխան աստիճաններին, որովհետև պատշաճ չէ իմ կողմից այժմ գնահատականներ տալ՝ հակասահմանադրական է, թե սահմանադրական չէ: Այդ հարցի պատասխանը կտա Սահմանադրական դատարանը: Լցվեք համբերությամբ և կստանաք ձեր հարցի պատասխանը: Ճիշտ է՝ դուք կռահեցիք իմ վերաբերմունքը ինչպիսին է, բայց տվյալ պահին կարծում եմ, որ ավելի կոռեկտ կլինի, եթե մենք սպասենք, որպեսզի այդ գործընթացը հասնի իր տրամաբանական ավարտին: Ինչ վերաբերում է այն խնդրին, թե ովքեր են լինելու մեր կուտակած միջոցների կառավարիչները, և արդյոք նրանք փոխկապակցված են բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ: Երևի թե մեծ երջանկություն կլիներ, եթե ՅՍ ռեյտինգ ունեցող կորպորացիաները և նրանց մենեջմենտը փոխկապակցված լիներ մեր բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ: Ցավոք սրտի այդպիսի վտանգավոր երևույթներ չկան Հայաստանում: Կան ուրիշ վտանգավոր երևույթներ, որոնք ավելի վտանգավոր են և ավելի ցավալի են, քան այն վտանգը և ռիսկը, որը դուք մատնանշում եք: Այդպիսի բան չկա և չի կարող լինել , հակառակ դեպքում ՅՍ

ռեյտինգ ունեցող ընկերություններն անհապաղ կկորցնեն իրենց ռեյտինգը: Իսկ ռեյտինգը, նրանց վարկանիշը, դա այն գործիքն է, որի շնորհիվ նրանք վաստակում են իրենց գումարները և նրանց սրբությունն է իրենց վարկանիշը: Այդպիսի ռիսկեր, փասք Աստծո, այսօր չկան:

Ինչի մասին ես պետք է խնդրեմ ձմեռ պապին՝ լսելով ձեր հարցը. որպեսզի մեր երիտասարդ լրագրողները լցվեն սիրով, որ մեր լրագրողները տարածեն բարիություն, որպեսզի չլինի լրատվական դաշտում չարություն, չլինի աստելության քարոզ, չլինեն պատվերով հողվածներ, չվարկաբեկեն մեր քաղաքացիներին: Այս բոլորը իմ ցանկությունն է, և կարծում եմ, որ այս ամենից մենք բոլորս կշահենք, որովհետև կփոխվի միջավայրը մեր երկրում: Այն միջավայրը, որտեղ մենք ձեզ հետ միասին ապրում ենք, աշխատում ենք, երեխաներ ենք դաստիարակում: Կարծում եմ, որ այդ միջավայրի փոփոխությունը մեր բոլորի շահերից է բխում:

**«Նովոստի Արմենիա»**- Պարոն Սարգսյան, մենք բավական երկար զրուցեցինք, կարծես շատ հարցերի հարցականներ մեզ համար պարզ դարձան, բայց Դուք Ձեր պատասխաններում մի շատ հետաքրքիր բան ասացիք, և ես որոշեցի այս հարցն անպայման տալ: Մենք հասկանում ենք, որ Հայաստանն այն երկիրն է, որն ունի բավականին սահմանափակ բնական պաշարներ և, բնականաբար, մեզ համար շատ կարևոր է տուրիզմի զարգացումը և սրա հետ կապված քաղաքացիական ավիացիայի հարցը: Գիտենք, որ առայժմ մենք չունենք ազգային ավիափոխադրող, որն արդեն ապրիլից չի կատարում չվերթեր: Ինչպե՞ս է լուծվում այդ խնդիրը: Դուք ասացիք, որ ավիատոմսերի գները բավականին կնվազեն: Ինչպիսի փոփոխություններ, տեղաշարժեք կան այս խնդրի հետ կապված: Շնորհակալ եմ:

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյան**- Առաջին՝ ցանկանում եմ ֆիքսել, որ ավիափոխադրումների ոլորտի ազատականացման հարցի շուրջ բուն քննարկումներ տեղի ունեցան, որոնք մեզ ստիպեցին մի քանի անգամ անդրադառնալ այն հայեցակարգին, որ կառավարությունը մշակել էր: Ավելին, հնչում էր սուր քննադատություն, այդ թվում մասնագիտական, մեր կողմից մշակված հայեցակարգի նկատմամբ, և մենք, ընդունելով այդ մտահոգությունները, որոնք հնչեցնում էին մասնագետները, որոշեցինք վարձել աշխարհահռչակ մի կազմակերպության, ինչպիսին է «Մաքքենզի», և պատվիրեցինք այդ հեղինակավոր կազմակերպությանը, որպեսզի նա մեզ համար մշակի հայեցակարգ, թե ինչ ճանապարհով մենք պետք է արդիականացնենք ավիափոխադրումները Հայաստանում, որովհետև ծայրահեղ տեսակետներ կային: Առաջին՝ միայն ազգային ավիափոխադրողներ պետք է լինեն, երկրորդ, որ պետք է գնանք բացարձակ ազատականացման ռեժիմի ներդրման:

Որպեսզի նաև այդ բնագավառի մասնագետները ստանան հեղինակավոր մասնագետների պատասխաններն իրենց հետաքրքրող հարցերի, մենք այս քայլին գնացինք և շնորհակալ ենք նաև մեր մասնավոր հատվածի գործընկերներին, Ազգային մրցունակության խորհրդի անդամներին, գիտեք որ հիմնադրամը բաղկացած է երկու մասից՝ պետություն, մասնավոր, և վերջինիս ներկայացուցիչները՝ Ռուբեն Վարդանյանն իր գործընկերների հետ, հատկացրեցին ֆինանսական միջոցներ, որպեսզի այդ պատվերը տանք «Մաքքենզիին»: Վերջինս նաև ամփոփեց բոլոր այն առաջարկությունները, որոնք գոյություն ունեին ասպարեզում և մեզ ներկայացրեց ազատականացման հայեցակարգ, որն ընկավ կառավարության ծրագրի հիմքում: Այս պահի դրությամբ մենք ունենք հայկական ավիափոխադրող, նոր ընկերություն է, որը ստացել է ավիափոխադրողի լիցենզիա, որն այս պահին մրցակցում է այլ երկրների ավիափոխադրողների հետ: Եվ այդ մրցակցային դաշտում մենք պետք է հետևենք, որպեսզի մրցակցային կանոնները չխաթարվեն և բոլորի համար այդ կանոնները լինեն հասկանալի: Այդ հայեցակարգում գոյություն ունի մի առանձնահատկություն. առաջին հերթին կանխատեսվում է, որ մենք պետք է լուրջ աշխատանք տանենք և շուրջ 22 երկրների հետ ստորագրենք ավիափոխադրումների ազատականացման վերաբերյալ համաձայնագրեր: Տեղյակ եք՝ առաջին համաձայնագիրն արդեն ստորագրվել է Ռուսաստանի Դաշնության հետ: Էկոնոմիկայի նախարարությանը հանձնարարական և լիազորություն է տրված մնացած բանակցությունները հասցնել ավարտին և ստորագրել համաձայնագրերը, ազատականացնել դաշտը, որպեսզի ավիափոխադրողներն ազատորեն կարողանան գալ Հայաստան և կազմակերպել ավիափոխադրումներ, ինչը կավելացնի մրցակցությունը և կբերի չվերթերի ավելացման և, բնականաբար, գների նվազման: Մրցակցության կանոնները պետք է լինեն հստակ, փաստաթղթում նկարագրված են՝ ինչպիսին պետք է լինեն այդ կանոնները: Երկրորդ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ պարզվում է՝ այդ հայեցակարգի ներքո հնարավորություն կստեղծվի խոշոր ավիափոխադրողների համար իրենց չվերթերը կազմակերպել, մնում են չվերթեր ոչ հեռու տարածություններում, որոնք տնտեսապես այնքան էլ ձեռնտու չեն: Այստեղ անհրաժեշտ է պետության կողմից հատուկ կանոնակարգման ռեժիմների սահմանում: Այս հայեցակարգը մենք քննարկում ենք միջազգային փորձագետների հետ, ուսումնասիրում ենք լավագույն փորձը և պետք է այդ դաշտը նույնպես կանոնակարգենք: Երրորդ առանձնահատկությունը կայանում է նրանում, թե ինչպես պետք է տարանջատենք այդ բնագավառի կարգավորման ֆունկցիաները: Առաջարկությունը եղել է միանշանակ և բոլորը դա ընդունել են, որ քաղաքապետի ֆունկցիաները պետք է տարանջատվեն, քաղաքականության ֆունկցիան պետք է

տրվի էկոնոմիկայի նախարարությանը, գործառույթները, որոնք վերաբերում են սերտեֆիկացիային, անվտանգության կանոններին, պետք է տեսչական հսկողությունը տրվի առանձին վարչությանը, իսկ դեպքերի և պատահարների մոնիթորինգը պետք է առանձնացված լինի, այսինքն նաև ենթադրվում է կառուցվածքային փոփոխություններ իրականացնել քաղաքիացիայի բնագավառում: Այս ճանապարհով աշխատանքները տարվում են և 2014 թվականի ընթացքում այս ծրագիրը կհասցնենք իր ավարտին:

**«Երևաննյուզ»**-Պարոն վարչապետ, սոցիալական փաթեթեր, որը ներդրվեց երկու տարի առաջ, որոշակի խոցելի կողմեր ունի, մասնավորապես առողջապահական ապահովագրության մասով: Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում այս մասով:

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյան**- 132 հազար դրամանոց փաթեթի մեծ մասը առողջապահության ոլորտի հետ առնչվող ապահովագրական մասն է: Հիշում եք, որ այս խնդիրը 2013 թվականին նաև Ազգային ժողովում քննարկվեց, մեր ընդդիմադիր գործընկերներն այս հարցը բարձրացրեցին և մենք համաձայնեցինք մեր քննադատների հետ, որ այո, այդտեղ մենք ունենք խնդիր, որ այդ ֆինանսական միջոցներն արդյունավետ չեն ծախսվում և սխեման պետք է փոխվի: Քննադատությունը տեղին էր և մեզ համար ընդունելի: Աշխատանքային խումբն աշխատեց, ներգրավվեցին մասնագետներ, այդ թվում ամերիկյան համալսարանի առողջապահության կառավարման ոլորտի մասնագետները և մշակվեց նոր հայեցակարգ, որը ենթադրում էր, որ այդ առողջապահական ապահովագրությունը պետք է իրականացվի պետական գործակալության կողմից, որը հնարավորություն կտա մեզ տնտեսել շուրջ 5 միլիարդ դրամ, որն էլ մենք կարող ենք ուղղել սոցիալապես խոցելի խավերի առողջությունն ապահովագրելու համար: Փոփոխության իմաստը կայանում էր դրանում և 2014 թվականից ամբողջությամբ այդ հայեցակարգը փոխեցինք: Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այդտեղ նաև կան լուրջ կոռուպցիոն ռիսկեր, որոնք դրսևորվեցին և մենք արձանագրեցինք դրանք ու դրա համար այդ սխեման փոխվեց և մենք 2014 թվականին կներդնենք կառավարման նոր մոդել: Արդյունքում ավելի շատ քաղաքացիներ կկարողանան օգտվել սոցիալական փոթեթի այս ծառայությունից:

**«Tert.am»**- Ձեր հարցազրույցներից մեկում, մասնավորապես ռուսական «Իզվեստիային» տված հարցազրույցում այսպիսի միտք եք արտահայտել, որ



Մաքսային միության շրջանակում ցանկալի է միասնական արժույթի անցումը: Նախատեսվում է արդյոք Մաքսային միության անդամակցության դեպքում միասնական արժույթի ընդունում և մյուս հարցը՝ ի՞նչպես է դա անդրադառնալու Հայաստանի բանկերում ՀՀ քաղաքացիների դրամով ձևակերպված ավանդներին: Այսինքն այդ կոնվերտացիան ի՞նչպես է տեղի ունենալու և արդյոք Հայաստանի քաղաքացիները չեն տուժելու այդ կոնվերտացիայի հետևանքով: **Շնորհակալություն:**

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյան-** Առաջին՝ ցանկանում եմ նշել, որ այդպիսի հարց այսօր մեր օրակարգում չկա և Մաքսային միության անդամակցության օրակարգում, ճանապարհային քարտեզում, Մաքսային միության պայմանագրի շրջանակներում նման հարց չի քննարկվել և մեր օրակարգում չկա: Միտքը, որ ես առաջ եմ քաշել, հետևյալն է. ցավոք սրտի Հայաստանի Հանրապետությունը չափից ավելի դոլարիզացված երկիր է և եթե դուք ծանոթանում եք Հայաստանի հանրապետության վարկանիշին, որը մեզ շնորհում են Մուդիսը և Տիտչը, և կարդում եք նրանց հաշվետվությունը տեսնում եք, որ թիվ մեկ խոցելի կետը մեզ համար դոլարիզացիայի բարձր մակարդակն է: Դա նշանակում է, որ համաշխարհային ֆինանսական շուկաներում տեղի ունեցող իրադարձություններն անմիջապես փոխադրվում են Հայաստան և մենք չունենք ֆիլտրեր, որ այդ ռիսկերը զսպենք: Դոլարիզացիան մեզ համար վտանգավոր է: Ի՞նչպես կարելի է դոլարիզացիայի մակարդակը նվազեցնել: Գաղափարը, որ ես առաջ էի քաշում, կայանում է հետևյալում. անհրաժեշտ է դիվերսիֆիկացիայի ենթարկել արտարժույթային գործարքները, որ մենք իրականացնում ենք: Մասնավորապես, եթե մենք Ռուսաստանի հետ իրականացնում ենք արտարժույթային գործարքներ, ապա դրանք իրականացնենք ոչ թե դոլարի միջոցով, այլ ռուբլու: Այսինքն, որպեսզի դրամը փոխարկվի ռուբլու և ռուբլու միջոցով մենք իրականացնենք այդպիսի գործարքներ և հակառակը: Դա ունի օբյեկտիվ հիմքեր: Առաջին՝ Ռուսաստանը թիվ մեկ ներդրողն է Հայաստանի Հանրապետությունում, երկրորդ՝ մեր տնտեսվարող սուբյեկտներն ապրանքաշրջանառությունը հիմնականում իրականացնում են Ռուսաստանի հետ և դա նշանակում է, որ ռուբլի-դրամ գործարքները նույնպես պետք է նրանք կարողանան իրականացնել:

Ցավոք, դրա համար չկան համապատասխան ենթակառուցվածքներ, և ռուբլին այսօր չի համարվում ազատ փոխարկելի արտարժույթ, որովհետև մեր առևտրային բանկերը ռուբլով գործարքներ չեն իրականացնում: ՀՀ Կենտրոնական բանկը ՌԴ Կենտրոնական բանկում չի կարող ռուբլով հաշիվներ պահել, որոնք կապահովեն մեզ եկամտաբերություն այն պարագայում, երբ ՀՀ կենտրոնական բանկը ֆեդերալ ռեզերվային համակարգում՝ Վաշինգտոնում, ունի հաշիվ և իր մնացորդները պահում

է այդ հաշվի վրա: Այդ հաշվի վրա էլ ֆեդերալ ռեզերվային համակարգը տոկոսներ է հաշվարկում, որն ստեղծում է այն ենթակառուցվածքները, որոնք հնարավորություն են տալիս նաև դոլարն օգտագործել հաշվարկներում, իսկ ռուբլին՝ ոչ: Դա նշանակում է, որ պետք է այդ ենթակառուցվածքներն ստեղծել, և մենք դրանից կշահենք, որովհետև տեղի կունենա արտարժույթային գործարքների դիվերսիֆիկացիա: Սա է հիմնական գաղափարը: Իսկ ապագայում միասնական արտարժույթային գոտի կստեղծվի, թե ոչ, դա հեռավոր ապագայի խնդիր է, որովհետև մինչև դրան հասնելը դեռ պետք է միասնական տնտեսական տարածք ստեղծել, դեռևս պետք է կենսամակարդակը Հայաստանի Հանրապետությունում առնվազն երեք անգամ բարձրացնել, որպեսզի 3000 ԱՄՆ դոլար ՀՆԱ-ի մեկ շնչին բաժին ընկնող ցուցանիշը մենք հասցնենք առնվազն 10000 ԱՄՆ դոլարի, որպեսզի այդ միասնական տնտեսական տարածքում կենսամակարդակն այդքան էական իրարից չտարբերվի: Այնպես որ դա ապագայի խնդիր է:

**«Aravot.am» - Նույն համոզվածությամբ, ոնց որ Դուք այսօր հիմնավորում էիք, որ Մաքսային միությանն անդամակցությունը բխում է մեր ժողովրդի շահերից, որ այդ դեպքում տնտեսական աճ կլինի և այլն, կներեք, եթե շատ բառացի չեմ մեջբերում, էլի նույնքան համոզիչ Դուք ոչ վաղ անցյալում հիմնավորում էիք, թե ինչու արդյունավետ չի լինի Մաքսային միությանը մեր անդամակցությունը: Երևի ավելի հիմնավոր, քան Դուք, ոչ մեկը դա չի արել. ընդհանուր սահմանի բացակայությունը նկատի ունեմ: Ինչպե՞ս հանկարծ գտնվեց այդ ընդհանուր սահմանը, և հաճա՞խ եք արդյոք Դուք, քաղաքական, տնտեսական կամ այլ նպատակահարմարությունից էլնելով, 180 աստիճանով փոխում Ձեր մտեցումները:**

Երրորդ հարց. Դուք անընդհատ այսօր խոսքի մեջ վկայակոչում էիք կառավարության իրականացրած հարցումները մեր համաքաղաքացիների տրամադրվածության վերաբերյալ՝ իրենց դրական տրամադրվածությունը փաստարկելու համար: Մի թե Ձեզ հայտնի չէ, որ հարցումներն անցկացնողները դրանք հարմարեցնում են պատվիրատուների ճաշակին, այսպես ասած, և ինչքան հասկանում եմ, տվյալ դեպքում այս հարցումների պատվիրատուն հենց կառավարությունն է:

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյան** – Գիտեք, այդ վերջին պնդման հետ չեմ կարող համաձայնվել, որովհետև պատկերը, որ հարցման արդյունքում մենք ներկայացրեցինք հանրության դատին, ոչ մի գեղեցիկ տոնայնություն այդ արդյունքներում չկար: Եթե Դուք հիշում եք, մեր ընդդիմախոսներն Ազգային ժողովում իրենց հղումները կատարում էին հենց այդ հարցման արդյունքների վրա, երբ տալիս էին կառավարության գործունեության գնահատականը: Կարծում եմ, որ այն կազմակերպությունը, որն իրականացնում է այդ հարցումները, պարկեշտ և պատշաճ ձևով է իրականացնում, որևիցե տրամադրվածություն՝ բավարարել կառավարության ցանկալի արդյունքներ, այդպիսի բան չկա, և բավական է, որ Դուք ծանոթանաք այդ հարցման արդյունքներին:

Երկրորդը, համաձայն չեմ Ձեր գնահատականների հետ 180 աստիճանով փոխելու կարծիքը: Ընդհանրապես ես նույնպես մարդ եմ և նույնպես կարող եմ սխալվել իմ գնահատականներում, կանխատեսումներում և այլն: Բայց ինչ վերաբերում է Մաքսային միությանն անդամակցելու գնահատականներին, ապա իրավիճակը հետևյալն է. այո, և ես այսօր նույնպես նշեցի, որ երեք տարի առաջ մեր ընդհանուր ընկալումն այն էր, որ նպատակահարմար չէ Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Մաքսային միությանը, և այդ հարցում մենք ունեինք կոնսենսուս: Ոչ ոք այդ գնահատականը կասկածի տակ չէր դնում՝ ո՛չ մեր ռուս, ո՛չ բելառուս, ո՛չ դազախ գործընկերները, ո՛չ էլ Հայաստանի Հանրապետության ներսում: Մեր բոլորի մոտ կար այդ ընդհանուր ընկալումը, որովհետև Մաքսային միության ձևավորումը մեր աչքի առաջ էր, և մեր բոլորի ընկալումն այն էր, որ միասնական տարածքի բացակայությունը լուրջ խոչընդոտ է Մաքսային միությանն անդամակցելու առումով: Դա մեր անկեղծ ընկալումն էր, որ նպատակահարմար չէ, քանի որ դա լուրջ խոչընդոտ է, և այն առավելությունը, որ մենք պետք է ստանանք, չենք ստանա:

Ես ձեզ ներկայացրեցի, թե ինչպես տեղի ունեցավ այս տեսակետի փոփոխությունը: Ես մանրակրկիտ ձեզ պատմում էի դրա տրամաբանությունը և պետք է խնդրեմ, որ դուք ուշադրություն դարձնեք դրան: Ո՞րն էր տրամաբանությունը: Մեր հիմնական գործընկերոջ հետ մեր տնտեսական հարաբերություններում ամեն տարի մենք հանդիպում ենք լուրջ խոչընդոտների, որովհետև Ռուսաստանը, դառնալով Մաքսային միության անդամ, ստիպված էր արդեն Հայաստանի Հանրապետության նկատմամբ կիրառել այն նույն խաղի կանոնները, որոնք նրանք ստեղծում էին Մաքսային միության հետ միասին: Երեք տարվա ընթացքում իրավիճակը կտրուկ փոխվեց, որը և դարձավ մեր նախագահների քննարկման առարկան: Մենք մեր ռուս գործընկերներին ասեցինք, որ մենք չենք կարող այդ ռեժիմով շարունակել մեր հարաբերությունները, խնդրում ենք, որպեսզի ռեժիմները փոխվեն Հայաստանի համար: Դրա համար ստեղծվեց աշխատանքային խումբ: Եվ մեր երկու՝ և՛ Ռուսաստանի, և՛ մեր ընկալումը նույնն էր, չկային տարբեր ընկալումներ: Դրա համար հանձնարարվեց, որ հաշվի առնելով այդ հանգամանքը՝ մեր աշխատանքային խումբը նոր գործիքակազմ առաջարկի, թե այս նոր իրողությունները, մեր տնտեսական կապերն ինչպիսին պետք է լինեն: Այդ բոլոր քննարկումների արդյունքում մենք գտանք, որ տնտեսապես ձևը, որով մենք կարող ենք լուծել այդ պրոբլեմները մեր տնտեսության համար, կայանում է Մաքսային միությանն անդամակցելու մեջ՝ ստանալով լրացուցիչ օժանդակություն, որը հաշվի է առնում տնտեսական սահմանի բացակայությունը, և այդ գործիքակազմն էլ մանրակրկիտ քննարկվեց: Հիմա կարելի է այս բացատրությունը դնել մի կողմ և նորից ասել՝ Դուք երեք տարի առաջ մի բան էք ասել, հիմա ուրիշ բան էք ասում: Կարելի է իհարկե, այդպիսի պնդում անել, եթե չընդունեք այն բացատրությունները, որ ես ձեզ ներկայացնում եմ, թե ինչ էվոլյուցիա է տեղի ունեցել:

Հարցումների վերաբերյալ ասացի, որ իմ կարծիքով, դրանք օբյեկտիվ հարցումներ են և օբյեկտիվ պատկերն են ներկայացնում: Շնորհակալություն:

Եթե այլ հարցեր չկան, ավարտենք: Երկու-երեք հոգի այնուամենայնիվ ուզում են շարունակել: Հարգելի գործընկերներ ես ուզում եմ շնորհակալություն հայտնել ձեզ, որ համբերատար լսեցիք իմ պատասխանները, որոնք, միզուցե, երբեմն երկար էին, բայց իմ ցանկությունը միակն էր, որպեսզի ձեզ համար հասկանալի լինի, թե ինչպես ենք մենք մտածում, ինչպես ենք մենք գործում: Առաջին հերթին դրա համար ուզում եմ ձեզ շնորհակալություն հայտնել, երկրորդը ուզում եմ ասել, օգտվելով առիթից, որ մենք Նոր տարվա և Սուրբ ծնունդի նախաշեմին ենք, ուզում եմ շնորհավորել ձեր Նոր տարին և Սուրբ Ծնունդը, ուզում եմ ցանկանալ, որ 2014 թվականը հաջող տարի լինի ձեզ համար, ձեր ընտանիքների համար, ձեր երեխաների համար, ուզում եմ, որ ձեր ընտանիքներում իշխի սերը, համերաշխությունը, որպեսզի դուք կարողանաք այդ սերն ու համերաշխությունը տարածեք Հայաստանի Հանրապետությունում, որովհետև դուք զբաղվում եք չափազանց պատասխանատու աշխատանքով և ուզում եմ, որ այդ աշխատանքը բավարարվածություն պարզևի նաև ձեզ, որպեսզի դուք զգաք, որ ձեր աշխատանքով դուք նպաստում եք մեր երկրի զարգացմանը, մեր քաղաքացիների բարեկեցության բարձրացմանը և ուզում, եմ, որ մեր հանդիպման ավարտը լցված լինի լավատեսությամբ, մենք միասին կարող ենք և պարտավոր ենք կառուցել ապահով և բարեկեցիկ երկիր: Շնորհակալություն: